



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՊԱՏՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1885 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Գ.

24 ՅՈՒՆԻՍ 1885



Պ. ՍՈԼՆՈՎ

1885



# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄՆ 1885 ԱՄԻ

ՆԻՍՏ Գ.

21 ՅՈՒՆԻՍ 1885

ՆԱԽԱԳԱՀ. — Սիմէօն Եպիսկոպոս Սէֆէրեան (Ս. - Ժ. - Ե.) .  
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան Էֆէնտի Եռսուֆեան .

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. — Ատենական գործողութիւնք .
- Բ. — Ընտրութիւն Բ. և Գ. Ատենադպրաց Ազգ. Ժողովոյ .
- Գ. — Ուղերձ ի պատասխանի Նախագահական բացման ճառին .
- Դ. — Ընտրութիւն Բաղարական Ժողովոյ .
- Ե. — Տեղեկագիր Երմտական-Յանձնաժողովոյ . (Երագիր Կեդր. ուղղակի տըրոց և Երմտացոյց 1885—86 ամի Ազգային Կեդր. Մատուկի) .
- Զ. — Առաջարկութիւն Ազգ. Վարչութեան յաղագս Երուսաղիմայ պարտուց բարձման խնդրոյ .
- Է. — Տեղեկագիր Նախաձեռնութեան և Համարակալութեան Գիւանաց վասն Հաստատման մի Ընծայարանի .

Ընդ առժամայ Նախագահութեամբ Գեր. Տէր Սիմէօն Եպիսկոպոս Սէֆէրեանի, Ատենապետ Էֆէնտի տոեանն բացու ժամը 3 1/2 ին ի ներկայութեան 38 Երեսօրհանաց , որոց թիւն ի վերջէ 65ի յանդէպու :

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա .

ԱՏԵՆԱՊԵՏ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԻՔ

1 .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՁ . — Ատեննն բացուած է :  
— Նախ կը փութամ ժողովոյդ հաղորդել Աըբ .

բազան Պատրիարք Հօր մէկ գիրն , սրով ժողովոյս այսօրեայ նստին չկարենալ նախադռնելը կը ծանուցանէ : Ահաասիկ այդ նամակն :

Վասմաշուք Ատենապետ Էֆէնտի  
Ազգային Երեսօրհանական Ժողովոյ ,

Ազգային Ժողովոյ վաղուան նստին չպիտի կրնամ նախագահել ինչ ինչ դատողումներ ունենալուս պատճառաւ :

Աներկմիտ եմ որ Պատկառելի Ժողովը կը շարունակէ անխափան իւր աշխատութիւնն , և կը մտղթեմ ի Տեառնէ

վասն իւր կարողութիւն և յաջողութիւն :

Ողջունելով զՃեզ և զՊատուական անդամն Երեսփոխանական Ժողովոյ ,

Մնամ արթարար

Պ. Կ. Յարութիւն Արքեպիսկոպոս

20 Յունիս 1885

Յ. Կ. Ընդ զըոյս կը հազարգեմք եկեղեցական նորընտիր երեսփոխաններէն Պալատու Տ. Վահան Քահանայի յանձնառութեան գիրն , որու ընտրութիւնն արդէն վաւերացեալ է իւր յանձնառութեան մասին մեր տուած ապահովութեանը վրայ :

Նոյն

Սոյն գրոյն ընթերցուէն յետոյ , Ատենայեան Էֆէնտի կոնցրի տեսնական միս թղթոց :

2.

Վաներացումն Ա. Ե. Բ. Յիստերու ատենագրութեանց .

ԱՅՆՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովոյ Աւալին և Երկրորդ նիստերու ատենագրութիւնը ժամանակին տարագրուած և Երեսփոխան Տեարքաբախտած լինելով , զայն Ձեր բռնին կենթարկեմ կարգու :

Չայս ասելով Ատենայեան Էֆէնտի նախ Ա. նախ ատենագրութիւնն ժողովոյ ընդունելութեան կենթարկէ և կը հրատարկէ զերեսփոխանս առ այս յայտնել իւրեանց ղխտողութիւնքն :

ՀԱՆԱՃԵԱՆ Ք. ԷՖ. — Նիստ Ա. երեսմրդ, երկրորդ սինակի մէջ ձտարբեր նկատում

ներ » ըսուած է , որ սխալ է : Ես ըսի թէ « Էթէ անձնական նկատումներ չկան » : Նոյն պէս 10րդ երեսի Ա. սինակի մէջ՝ Մէրեթմ-Պուլի էֆի խօսքին մէջ յիշուած « զեղծում » բառն հերքած եմ , որ նոյնպէս չէ նշանակուած :

ՊԵԿԵԱՆ Յ. ԷՖ. — Երես 11րդ, Մայր-Կիւանի ընտրութեանն համար կարգեալ Քննչայ մին էր Քէրէտէմէտեան Յովհաննէս էֆէնտի , բայց կը տեսնեմ թէ փոխանակ այդ անունը Պէշիրեան Մամուէլ էֆի անունն դրուած է , որ բացակայ էր այդ նստին , ինչպէս և կը հաստատէ ներկայից ցուցանի :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԵՏ — Այդ նստին մէջ Էրր Ատենայեան Էֆէնտի կուզէր նախ բռնի դնել Թիրեաքեան էֆէնտի ընտրութեան մասին եղած առաջարկն և ապա տեղեկագիրը , ես օրինական ղխտողութիւն մ'ըրիս յայտնելով թէ՛ պէտք չէ՛ խնդիրն մասնաւորել և հարկ է Քառը ժողովոյ կողմնէ եկած ծանօթագրոյն վրայ՝ այդ ընտրութիւնն իրր օրինաւոր՝ վաւերել : Իմ այդ առաջարկն որ որոշիչ հանգամանք մ'ունէր և որ ընդունելով , ըստ այնմ վաւերացաւ ընտրութիւնն , ամբողջովին վերցուած է Ատենայեան մէջէն : Կր խնդրեմ արձանագրել իմ զայս ղխտողութիւն :

Ուրիշ ղխտողութիւն չլինելով , Ատենայեան Էֆէնտի բռնի կը դնէ Ա. նստի ատենագրութիւնն , որ կը Վ.Ա.Ե.Բ.Ա.Յ.Ա.Յ. հանդերձ եղած ղխտողութեամբը :

ԱՅՆՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ Բ. նիստ ատենագրութիւնն Ձեր բռնին կենթարկեմ : Դիտողութիւն ընող կայ :

Ոյ որ ղխտողութիւն ընելով , Ատենայեան Էֆէնտի ժողովոյ բռնին կենթարկէ Երր նստի ատենագրութիւնն , որ կը Վ.Ա.Ե.Բ.Ա.Յ. աւանց ու է ղխտողութեան :

3.

Բացակայութիւնք

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — Մեր պաշտօնակիցներէն Տ. Սահակ Բահանայ Տ. Սարգսեան և Քրիստոսաուր ԷՖ. Ղազարսեան անձնական ակարութեամբ ժողովոյս այս աւուր նիստէն բացակայ մնանին գրով հայտըղած լինելով Դիւանիս , ըստ օրինի՛ իբր օրինաւոր բացաւ կոյք կընդունուին :

Չայս ասելով Ատենապետ ԷՖէնտի յիշեալ երկու երեսփոխանաց անուանին՝ իբր օրինաւոր բացակայք՝ արձանագրել և կուտայ ի Տումարի ներկայութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — Նոյնպէս մեր պաշտօնակիցներէն Չերազ Մինաս ԷՖէնտիի կողմանէ գիր մը կայ Դիւանիս վրայ զոր կը ներկայեմ ժողովոյդ :

Վստմանիայլ Ատենապետ ,

Պատիւ ունեցայ ստանալ Ձեր պաշտօնագիր , և կը փութամ յայտնել թէ անհնար է ինձ ընդունիլ Նախաձեռնութեան Դիւանի անդամակցութիւնն :

Կը յայտնեմ նաև թէ , հիւանդութեանս սաստկացման համար , պիտի ըստիպուիմ բացակայ մնալ Աղզային ժողովոյ մի քանի նիստերէն :

Եմ միշտ , Վսիմափայլ Ատենապետ ,  
Ձեզ անձնուէր  
Մ. Չերազ

4 Յունիս 1885  
Բէրա

Ժողովն ընդունելով Չերաս Մինաս ԷՖէնտիի հրաժարականն յանդամակցութենէն Նախաձեռնութեան Դիւանի , նորս անունն ևս , իբր օրինական բացակայ արձանագրել կուտայ ներկայութեան տումարին մէջ :

4.

Մասնաւոր ծանօթութիւնք

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ . — (Ստենապետ կրօն. ժողովոյ) Ատենական միւս գործողութեանց շանցած , հաճեցէք խօսք տալ ինձ կարեւոր յայտարարութեան մ'առթիւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — Կ'նայ խօսիլ , եթէ պարզ յայտարարութեան մը համար է :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ . — Այո՛ : Ի դիմայ կրօնական ժողովոյ կուգամ յայտնել Պատկ. ժողովոյդ թէ՛ Նա ըստ Սահմանագրութեան տրամադրութեան՝ իբր միամեայ պաշտօնակարութեան շրջանի համարատուութիւնն պատրաստած լինելով , յանձնած է ի տպագրութիւն , և կը յուսայ թէ մինչև յատարարական նիստ պիտի կարենայ ներկայել զայն ժողովոյդ , եթէ նախական զժուարս թիւնք սուսայ ս և է արդելը չը յարուցանեն :

ՉԱՅՆԵՐ . — Լաւ , լաւ . շնորհակալ եմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — Պարտք կը համարիմ հետևեալ երկու խնդիրներն հարողել ժողովոյդ :

Ա . Մէրեձ-Գուլի Յարութիւն ԷՖէնտի , Նախարանիչ դիւաններէն միոյն անգամ ընտրուած պահուն ըրած յայտարարութիւնն զըրաւոր կերպիւ կրկնելով , կը պնդէր՝ իբրև օրինական խնդիր , թէ վիճակու դադարել երեսփոխան մը սէտք չէր Դիւանաց մէջ պաշտօն ստանձնել : Սակայն այս մասին ժողովոյդ յայտնած կողմեսց համեմատ , Դիւանս պարտաւորեցայ կրկին անգամ հրուէր կարգալ իրեն , ծանուցանելով որ եթէ չուզէ ստանձնել իրեն տրուած պաշտօնը , պատճառ պիտի ըլլայ ժողովոյս ամբողջական գործողութեանց ետ

մնալուն : Եւ այս սրտածաւաւ մկայն համա-  
կերպած ըլլալն մասնաւոր նամակաւ մը յայ-  
տարարեւէ ետև իւր պաշտօնն ստանձնեց :

Բ. Տիգրանակերտի Գուառական Ժողովոյ  
Անդամոց ստորագրութեամբ զիւր մ'եկած էր  
Դիւանիս, որ նկատողութեան առնելով խնդ-  
րացն սովորականութիւնն, յանձնած էր զայն  
Ամեն Ս. Պատրիարք Հօր նկատաւման, որոյ  
ի պատասխան՝ Նորին Սրբազնութիւնն ևս սոս-  
ձանօթագիրն զրկած է մեզ :

**Վանաշուք էֆէնտի,**

Տիգրանակերտի մերազնէից թշուառ-  
վիճակին նկատմամբ Գաւառական Ընդ-  
հանուր Ժողովոյ անդամոց կողմէ Զեր  
Վանաթեան ուղղեալ նամակն՝ զոր հա-  
ղորդած էիք մեզ, ստացանք, և հարկ  
կը համարեմք յայտնել Զեզ թէ Ազգ-  
Վարչութեան Խառն Ժողովն՝ իւր երէկի  
նստին մէջ նկատողութեան առնելով խըն-  
դիրն, և այս մասին արդէն ինչ ինչ տը-  
նօրէնութիւններ կատարուած լինելով,  
փութացինք նաև նոյն նամակաւ արտա-  
յայտուած փափաքանոց համաձայն և  
սրբանամբ Ժողովին, հեռագրով մը յանձ-  
նարարել եղեսիոյ Առաջնորդ Մխիթար-  
եան Գեր. Տ. Խորէն Եպիսկոպոսի, որ-  
պէս զի ուղևորի անմիջապէս ի Տիգրա-  
նակերտ՝ Ժողովրդեան այս ցաւալի վի-  
ճակին դարման մը տանելու համար :

Մնամք ազօթարար

Պ. Կ. Յարութիւն Արքեպիսկ.

13 Յունիս 1885

Կ. Պոլիս

( Յե՞ր ընթերցան )

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ, — Իրր  
Վարչութեան անդամ, հարկ կը համարվի այդ

խնդրոյն վրայ աւելի մանրամասն ծանօթու-  
թիւններ տալ Պատիկ Ժողովոյը :

Անշուշտ յայտնի է Զեզ, Տեարք Երես-  
փոխանք՝ թէ Վարչութիւնն սովից առաջ  
Տիգրանակերտի Առաջնորդական Տեղապահ  
կարգած էր զԲագրատունի կարապետ Վար-  
չապետ, աակոյն սա դրամական ինչ ինչ  
արգելքներու պատճառաւ չը կարենալով ու-  
ղևորել իւր պաշտօնառնելին, Վարչութիւնն  
հարկ տեսաւ հրահանգ զրկել նախ Մխիթարեան  
Տ. Խորէն և ապա ձգնաւորեան Տ. Յակոբ Եպիս-  
կոպոսաց երթալ ի Տիգրանակերտ, սրբնոյնպէս  
հրոժարեցան հիւանդութեան պատճառաւ :

Այժմ Վարչութիւնն սրտած է որ  
Դերձօտեան Տ. Արխատակէս Սրբազան, որ ար-  
դէն Տարնոյ Վանոց Վանաշայր կարգուած է,  
նախ ուղևորի ի Տիգրանակերտ և անը իրեն  
տրուած հրահանգներն ի գործ դնելէ յետոյ,  
մեկնի իւր պաշտօնատեղին :

ԹԻՒՆԱՔԵԱՆ Յ. ԷՅ. — Փափաքելի է որ,  
այն նիւթական արգելքներն, որոց հանդիպե-  
ցաւ Բագրատունի Տ. կարապետ Վարչապետ,  
չեղնեն նաև Դերձակեան Սրբազանին զէմ, և  
սա կարենայ երթալ մխիթարել Տիգրանակեր-  
տի ժողովուրդն և կազմել Ազգ. Ժողովներն :

ԶԱՆԱԶԱՆ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ. — (Առ Նար-  
— Պէյ Սրբազան) Բայց չըջիք թէ Տիգրանու-  
կերտի Ազգայնոց կողմանէ եկած տեղեկագիրն  
ի՞նչ կը պարունակեր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այլ տեղեկագիրն  
կը յայտնէ թէ Տիգրանակերտի ազգային գոր-  
ծերն անկերպարան վիճակի մը մտածուած են,  
և կը խնդրեն որ Մխիթարեան Խորէն Սրբա-  
զան՝ իրր քննիչ այցելէ իրենց, որով կը յու-  
սան թէ վիճակը կրնայ խաղաղիլ :

ԹԻՒՂՊԵՆՏՃԵԱՆ ԵՒ ԱՐՓԻԱՐԵԱՆ ԷՅ.Բ. —  
Բայց կը ցաւի թէ Տիգրանակերտի ազգայնոց  
վիճակն աղետալի փախճանի մը հետած է,



և այս է որ կը յուզէ զժողովուրդն : Գէթ այդ մասին պէտք է մեզ ծանօթութիւն մը տալ :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ. — Վարչութիւնն ալ ցարդ քննութիւն չէ կատարած որպէս զի կարենայ ըսել թէ՛ մինչև ո՞ր աստիճան իրաւոյի են այդ ըստածներն : Եւ երբ մեր այցելու Արքուղանն հասնի ի Տիգրանակերտ, անուշտ ամեն ինչ մանրամասնօրէն պիտի տեղեկագրէ Կեդրոնի :

Սոյն թեր ու զէմ տրուած բացատրութիւններէ վերջ, Ատենապետ Էֆէնտի վերատին ձեռք կտանու ատենական գործողութեանց շարունակութիւնն :

5.

Տեղեկագիր երեսփոխանական ընտրութեան Իսկիւտար Ս. Խաչ Թաղի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ի սկիւտարի Ս Խաչ Թաղէն պակասեալ մէկ երեսփոխանին տեղ նոր ընտրութիւն կատարուած եւ տեղեկագիրն աւանդուած է Դիւանիս հանդերձ Ս. Պատրիարք Զօր ապաճփագրովն :

Ձայս ասելով, Ատենապետ Էֆէնտի կը հրաւիրէ զԱտենաղայի Էֆէնտի ընթեռնուէ սոյն ընտրութեան վերաբերեալ պաշտօնագրերն :

Վսեմաշուք Ատենապետ Էֆէնտի Ազգ. երեսփոխանական ժողովոյ :

Մայրաքաղաքիս Իսկիւտարի Ս. Խաչ Եկեղեցոյ Թաղին կողմէ Երեսփոխան ընտրուած է,

Դրիւգօր Էֆէնտի Չիթճեան

որ իւր յանձնառութիւնն յայտնած է գրով :

Քաղաքական Ժողովն յիշեալ նոր ընտիր երեսփոխանին ընտրելութեան հանգամանքները ընկելով՝ ըստ ամենայնի համաձայն կը գտնէ Ազգ. Սահմանադրութեան տրամադրութեանց, և կը փութայ ներկայ ծանօթագրով ընտրութեան տեղեկագիրն և ընտրելոյն յանձնառութեան գիրն ներկայել Պատկառելի ժողովոյդ Էֆէնտիին և ի պարտուպատշաճ տնօրէնութիւն :

Ի գիւմաջ Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղ. Ժողովոյ

Նախագահ

Պ. Կ. Յարութիւն Արքեպիս.

Ատենաղայի Բ. Ատենաղետ

Ն. Ալվագեան Բ. Հայամեան

20 Յունիս 1883

Կ. Պոլիս

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր,

Համար 4078 և Մարտ 26 թիւ գրութեամբ մը Թաղիս երեսփոխաններէն չորրորդ բացակայութեամբ հրաժարեալ Աթանագիրն էֆէնտի Արագեանի տեղ նոր երեսփոխան մը ընտրել հրամայուած էր :

Ընտրական Կանոնագրին երկրորդ յօդուածին համաձայն, Թաղիս պատուաւոր ընակիչներէն չորս անձինք Թաղ. Խորհրդոյ անդամաց վրայ աւելցունելով ընտրողական ժողով կազմուեցաւ Մայլաճին և իր Դիւանը ընտրելէ ետքը, Երեսփոխանական Ընտրողաց ցանկը որբադրելով Ս. Եկեղեցոյս բակը կախեց, ինչպէս և ի գիւրութիւն ընտրողաց ե.

ապատիկ թուով ընարեւեաց ցանկ մը  
և ընտրական գործողութեանց պայ-  
ճանները յիշեցունող և քուէարկութեան  
ու քուէհամարի օրն ու ժամը ծանու-  
ցանող ազգարարագիր ի տես ժողովը-  
դեան դրու :

Նոյն օրն յատենի Ս. Եկեղեցւոյ ալ  
ծանուցուեցաւ քուէարկութեան ու քը-  
ւէհամարի օրն ու ժամը :

Քուէթղթերը, ընտրական օրէնք-  
ները յիշեցունող նամակաց հետ ցրուե-  
ցան 310 ընտրողաց, և Մայիս 19, կիւ-  
րակէ որոշեալ ժամուն քուէարկութեան  
սկսելով՝ տեսնուեցաւ որ 310 ընտրող-  
ներէն միայն 93 անձինք մասնակցե-  
ր են, 30ը անձամբ և 63ը նամակաւ իրենց  
քուէները տալով :

Անմիջապէս քուէհամարի գործո-  
ղութեան սկսելով՝ տեսնուեցաւ որ բա-  
ցարձակ առաւելութեամբ ո՛չ ոք ընտ-  
րուած է : հետևաբար որոշուեցաւ հա-  
մեմատական երկրորդ քուէարկութիւն  
կատարել Յունիս 2 կիրակի, առաւե-  
րագոյն քուէ ստացող հետևեալ անձանց  
վրայ որք են ,

Մարտիրոս էֆ. Գօլօլեան քուէ 42  
Գրիգոր » Չիթճեան » 46

Այս անձանց վրայ քուէարկութիւնը  
կատարուելով Յունիս 2 կիրակի օր, 310  
ընտրողներէն 132 անձինք մասնակցե-  
ցան . 68ը անձամբ, և 64ը նամակաւ :

Քուէհամարի արդիւնքէն տեսնուե-  
ցաւ որ առաւելագոյն քուէ ստանալով  
Երեսփոխան ընտրուած է ,

Գրիգոր էֆ. Չիթճեան 75 քուէով,

Ընտրողական ժողովս յատուկ գը-  
րութեամբ շնորհաւորելով Գրիգոր էֆ .

Չիթճեանի սոյն ընտրութիւնը, իւր յանձ-  
նառութեան գիրը խնդրեց, զոր ստա-  
նալով տեղեկագրիս հետ ներփակեալ  
ղրկուած է Ձեր Բարձր Սրբաղնութեան  
ի պարտուպատյած անօրէնութիւն :

Մնամ արօթակից

Ձերդ Բ. Սրբաղնութեան  
Գրիգորիս եպիս. Ալեքսանտ  
Դիւան Ընտրող. Ժողովոյ

Ատենապար  
Գեորգ ձ. Արապեան Կարապետ Գուեռման  
9 Յունիս 1885  
Իւսկ. Ս. Խաչ Թաղ

Գերապատիւ Սրբաղան Հայր,  
Քուէից համեմատական առաւելու-  
թեամբ նուաստիս Երեսփոխանական ընտ-  
րութիւնը շնորհաւորող, և այս մասին  
գրաւոր կերպով հաճութիւնս յայտնել  
պարտաւորող Ձերդ Սրբաղնութեան հը-  
րամանագիրը ընդունելու պատիւ ունե-  
ցայ :

Նախ՝ յայտնելով անարժանիս ջերմ  
շնորհալիքը Մեծապատիւ Թաղեցւոց՝ և  
ապաւինելով Օրհնութեան Ձերում և  
յենլով բարեմաղթութեանց նոցա, կը  
համարձակիմ երկրորդապէս ներկայիս  
իմացնել սոյն լուծն ու բեռը սիրով տա-  
նելու խոնարհական ընդունելութիւնս :

Արդ Սրբաղան Հայր, պաշտօնական  
անօրինութիւնը և պարտ ու պատշաճը  
կարգադրել Ձեր Սրբաղնութեանը կամ-  
քէն կասեալ ըլլալով,

Մնամ համբուրիւ Այոյ Ձերումդ  
Սրբաղնութեան

Ամենախոնարհ ծառայ  
Գրիգոր Ա. Չիթճեան

4/6 Յունիս 1885  
Իճատիյէ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Եթէ զխողութիւն ընող չ'կայ, սոյն տեղեկագիրն ժողովոյդ ընդունելութիւն կ'ենթարկեմ :

Ձայս յայտարարելով, Ատենապետ էֆէնտի քուէի կը դնէ սոյն ընտրութեան օրինաւորութիւնն որ կ'ընդունուի միաձայնութեամբ :

Հետեւաբար Ատենապետ էֆէնտի Իւսկիւտարի Ս. Խաչ Թաղէն Աղգային Երեւոյտիսան կը ՀՈՉԱԿԻ :

Գրիքոր էֆէնտի Չիթճեան

Բ.

Ընտրութիւն Բ. Ե. Գ. Ատենաղայրաց Աղգային ժողովոյ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ինչպէս յայտնի է, մեր այս օրուան Օրակարգի Բ. բոլոր խնդիրները շնորհաբար է իրականացուցին Բ. Ե. Գ. Ատենաղայրաց ընտրութիւնն : Եթէ ժողովը կը հաւանի, առ այս Դիւանս երկու ընտրելի անձ կը ներկայացնէ Ձեզ . եթէ ոչ, վերստին քուէարկութիւն կը կատարուի :

ՁԱՏԵՆԻ. — Շատ լաւ. Դիւանի կողմէն խող առաջարկուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ուրեմն Դիւանս կատարել է Բ. Ատենաղայր ընդունիլ՝ Ստեփան էֆ. Տամատեան եւ Գ. Ատենաղայր՝ Միհրան էֆէնտի Տէօքմէճեան :

Ժողովն միաձայնութեամբ ընդունելով Մայր-Դիւանի կողմանէ առաջարկել սոյն երկու անձանց ընտրութիւնն, Ատենապետ էֆէնտի ըստ այնմ ժողովոյ երկրորդ Ատենա

ղայր կը ՀՈՉԱԿԻ Ստեփան էֆէնտի Տամատեան եւ երրորդ Ատենաղայր՝ Միհրան էֆէնտի Տէօքմէճեան :

Եւ ըստ որում երկրորդն ժողովն քացակայ կը գտնուէր, ուստի Ատենապետ էֆէնտի կը հրաւիրէ զՄիհրան էֆէնտի Տէօքմէճեան անցնել ի Դիւանս եւ փոխանորդել Բ. Ատենաղայրի պաշտօնին :

Գ.

Ուղերձ ի պատասխանի Նախագահական բաղման մատին .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Մեր Ս. Նախագահի բաղման ճառին ի պատասխան՝ ժողովոյս կողմանէ մատուցուելիք Ուղերձն ըստ օրինի Ատենապետաց Դիւանի կողմանէ պատրաստուած եւ նախապէս բախուած է Երեւոյտիսան Տեարց : Եթէ զխողութիւն ընող կայ այդ Ուղերձին վրայ, կը հրաւիրեմ խօսք առնուլ :

ԹԻԻԼՊԵՆՏՏԵԱՆ Ե. ԷՅ. — Կարծեմ ընդհանուր սովորութիւն մ'է որ քուէարկուելիք Ուղերձն նախ իւր ամբողջութեամբ կարդացուի եւ ապա հաստատուած առ հաստատուած կարդացուելով վիճարանութեան դրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Թիւրքական էֆէնտիի առաջարկութիւնն այնքան օրինական է որ զայն քուէի դնելու իսկ հարկ չտեսնեք Դիւանս :

Ձայս աւելով Ատենապետ էֆէնտի, կը հրաւիրէ զԱտենաղայր էֆէնտի նախ ընթեռնուլ Ուղերձն ամբողջովին :

Բարձրաշնորհ Սրբազան Հայր Աղգային ժողովոյ ներկայ շրջանի բաղմանն առթիւ, Ձեր Բարձր Սրբազ

Նույնիսկ օրհնածիր բանախօսութեան ի պարտախախտի, Երեսփոխանութիւնս կը փութայ արտայայտել իւր երախտագիտական զգացմանց ջերմ հաւաստիքն:

Նախ և յառաջ սրտեռանդն խնդու-  
թեամբ լսեց ժողովս մեր առատագութ  
կայսեր, Սուլթան Ապտիւլ-Համիտ Խանի  
Բարձր համակրութեան արտայայտու-  
թիւնն, որով բարեհաճած էր պատուել  
իւր հպատակ Հայ-ժողովուրդն որ կը  
յարատիէ միշտ իւր դարաւոր հաւա-  
տարմութեան մէջ: Համայն Երեսփո-  
խանք կը կրկնեն այն մաղթանքներն,  
զորս փութացած էիք մատուցանել վասն  
Երկարութեան անգին կենաց Նորին կայ-  
մերական Վահապառութեան, ինչպէս  
նաև վասն անսասան յարատևութեան  
Օսմանեան մեծաորը Գահուն:

Նմանապէս խորին գոհունակու-  
թեամբ իմացաւ Ամենայն Հայոց կաթո-  
ղիկոսի ընտրութիւնն, որոյ արդեանց  
մէջ վրովին յարդուած է թրքահայոց  
մասնակցութեան իրաւունքն, և կատա-  
րելապէս պահպանուած է Հայ-Ազգին  
ամէն տարաբնակ մասանց համերաշխու-  
թիւնն: Քաջայոյս է Երեսփոխանու-  
թիւնս թէ Ազգին միաձայն ընտրեալն,  
Ամեն Տ. Մեղեքիսեպետի Ս. Արք-Եպիսկո-  
պոս պիտի բազմի ընդհուպ ի Մայ-Աթո-  
ոքն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ:

Գարձեալ մեծաւ խնդութեամբ լսեց  
ժողովս և ինկատ առաւ այն խոհական  
ուղղութիւնն զոր կը փափաքի Ձեր Բարձր  
Սրբազնութիւնն տալ ազգային գործոց  
ընթացքին:

Ուստի կը փութամբ յայտարարել թէ  
Երեսփոխանութիւնս բոլորովն համամիտ  
է այն ազգօգուտ ծրագրին, որով Ձեր

Բարձր Սրբազնութիւնն բարեհաճած էր  
իւր իմաստուն շրջահայեցութեամբ օժ-  
տել Ազգային ժողովոյս ներկայ նստա-  
շըրջանի աշխատութեանց վերսկսումն:

Ձեր Սրբազնութիւնն կրնայ ապա-  
հով ըլլալ թէ Երեսփոխանութիւնս կը  
ճանչէ իւր համերաշխ պարտաւորու-  
թիւնն, որով պարտի աշակցել վասն լը-  
րացման Ազգային բազմազան պիտոյից:

Ազգային իրական պիտոյից թա-  
փանցելու և դայնս հոգալու համար,  
Ձեր Բարձր Սրբազնութեան ի Տեառնէ  
հայցած եղբայրական սիրոյ, իմաստու-  
թեան, փութալանութեան, խոհականու-  
թեան և շրջահայեցութեան ողին՝ Ազգը  
կը յուսայ իւր մէջ ընդհանրացած տեսնել  
չնորհիւ այն իմաստուն տնտեսութեան և  
անաջառ գործադրութեան Ազգային և  
Եկեղեցեական օրինաց, որ ամէն ժո-  
ղովորեան մէջ գործադիր իշխանութեան  
Պետին կը պատկանի:

Ձեր Բարձր Սրբազնութիւնը կը յի-  
շեցնէ նաև լինձայարանի մը հաստա-  
տութեան ծրագրին, զոր Պատկ. կրօն,  
ժողովն մատուցած էր Ազգային ժողո-  
վոյս, որոյ նկատմամբ Նախաքննիչ-Գիւա-  
նաց տեղեկագիրք պատրաստ են արդէն  
ժողովս ըմբռնած է Եկեղեցականաց  
բարեւոք կրթութեան կարևորութիւնն և  
լուրջ ուշադրութիւն պիտի նուիրէ առ-  
այդ հարկ եղած միջոցները անօրինե-  
լու:

Համաձայն Ձեր Բարձր Սրբազնու-  
թեան արտայայտած փափաքանաց, Ազ-  
գային-ժողովս կը բաղձայ՝ առաւել քան  
երբէք՝ բացառիկ կարևորութիւն մ՝ ըն-  
ծայել և դորաւոր միում մը տալ Ազգա-  
յին դաստիարակութեան, և առ այս կը

հաւատայ Ձեր Բարձր Սրբազնութեան  
աջակցութեանն ըստ ամենայնի :

Ձեր Ամենապատուութիւնն կը յի-  
շեցնէ մեզ թէ Ազգային Սահմանադր-  
ութեան ինչ ինչ մասերուն բարեփոխ-  
ման հարկն փորձառութեամբ երևան ե-  
լած է :

Այո, Ամենապատու Տէր, այդ հար-  
կըն ի վազուց զգալի եղած և Ազգային  
Ժողովն ալ զմտազան ձեւերով ձեռնար-  
կած է արդէն այնմ. բայց եթէ պարա-  
գայից բերմամբ իւր աշխատութիւնք  
մասամբ միայն արդիւնաւորեալ են ցարդ,  
Ժողովս կը կարծէ թէ Ժամն հասած է  
որ Ձեր Ամենապատուութիւնն ձեռնար-  
կէ անմիջապէս այս ինչդրոյն իւր շրջահա-  
եաց խոհակնութեամբ զայն ըստ օրինի  
ի յանգ հանելու համար :

Ձեր Բարձր Սրբազնութիւնը յոյժ  
բանաւոր եղանակաւ հրաւեր կը կարդայ  
Ազգին և մասնաւորապէս Երեսփոխա-  
նութեան ի համերաշխութիւն և ի միա-  
բան գործակցութիւն, և միանգամայն  
յորդոր կը կարդայ հրապարակախօսնե-  
րուն որ «բարերարներն օրհնաբանելու  
և ծառայողներն յարգելու ճամբան բա-  
նան Ազգին մէջ, որպէս զի բազմամայ  
թիւ պարտավճար, անձնուէր և բարե-  
բարոյ անձանց »: Սրբազան Հայր, այս  
խօսքերէն իւրաքանչիւրն կը պարունակէ  
այնպիսի հիմնական ճշմարտութիւններ  
չոր Ազգին ողջամիտ մասն ըմբռնած է  
և որք նոր նուիրագործում մը կը ստա-  
նան Ձեր Բարձր Սրբազնութեան բեր-  
նէն արտայայտուելով, Գաղով այս ճըշ-  
մարտութեանց իրականացման համար  
Ազգ. Ժողովոյ անկ եղած գործակցու-  
թեան, Երեսփոխանութիւնն լաւ կը

հասկընայ որ իւր կոչման նուիրական  
պարտականութիւնն է, օրինաց սահմա-  
նին մէջ, ոյժ տալ Ազգ. Գործադիր Իշ-  
խանութեան և ոչ թէ անդամաւուծել  
զնա, որպէս զի կարող լինի գոհացում  
տալ բոլոր այն կենսական շահուց որք  
ի ձեռս իւր աւանդեալ են :

Քաջայայտ ըլլալով որ Երեսփոխա-  
նութեանն զգեցած նոր ոգևորութեամբն  
արդիւնաւոր պիտի լինի ներկայ նստա-  
շրջանս, կը մաղթեմք ընդ երկար վայե-  
լել զԱմեն. Սրբազնութիւն Ձեր իւր  
Նախազահական Աթոռոյն վրայ :

(Յեռ ընկերացնալ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ որ Աղբրձն հատուած  
առ հատուած պիտի կարգացուի, կը հրաւի-  
րեմ զՄէրէմ-Գուլի Յարութիւն Էֆէնտի, որ  
կրք Տեղեկագրեր Ատենապետաց Գիւանի, պա-  
տասխանէ լինելիք զխոտոլութեանց :

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ. — Ազգային Ժողո-  
վըս Ատենապետաց Գիւանի հետ գործ չունի,  
և և այս պարագայիս մէջ նորա կողմանէ արը-  
ուելիք բացատրութիւններն ըսելու պարտա-  
ւոր չէ, վասն զի Երեսփոխանք պարզապէս  
իրենց զխոտոլութիւններն պիտի ընեն եւ թեր  
ու զէմ կարծեաց փոխանակութենէ վերջ,  
քուէի պիտի զրուի այդ Աղբրձն :

ՓԱՆՈՍԵԱՆ Կ. ԷՖ. — Կը ձայնակցիմ  
Թիրեաքեան Էֆ.ի :

ԹԻՒԼՊԷՏՏՃԵՆ Ն. ԷՖ. — Նայնպէս եւ ես :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենապետաց Գի-  
ւան բառերն սլեաք չէ զՁեզ խրտչեցնէ, Տեաքը  
Տարակոյս չկայ որ Ժողովը պիտի պատրաստէ  
Աղբրձն, սակայն ինչպէ՞ որ Երեսփոխան մը

անհատացէս իրաւունք ունի եղած զիրողութեանց պատասխանելու, նոյնպէս իւր այդ իրաւունքը կրնայ նաեւ ի գործ դնել իւր անդամ Ատենապետաց Դիւանի: Խորհրդարանական կան կանոնն զւ ամբողջութեւ կը պահանջեն որ ամէն խնդիր որ կուգայ Դիւանէ մը կամ Յանձնաժողովէ մը, իւր յատուկ Տեղեկարարն ունենայ:

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ. — Ինչպէս որ պահ մ'տուջ ըսի, Ատենապետ էֆէնտի, մենք հոս Երեսփոխանական ժողովոյ մէջ կը զըտնուիմք. ժողովն ինքն է տէր իւր վիճարանութեանց եւ բնաւ պարտաւոր չէ՝ անպատճառ համակերպել Ատենապետաց Դիւանին:

ՀԱՒԱՃԵԱՆ Բ. ԷՖ. — Եթէ Ուղերձին մէջ մութ կէտեր նշմարուին, յայնժամ միայն Ատենապետաց Դիւանն կը հրաւիրուի լացատրել այդ մութ կէտերն:

(Փանոսեան էֆ.ի եւ ալ մի քանի Երեսփոխանաց կողմանէ ընդ միմեան տեղի կուտան, որով ժողովոյ մէջ ձայնից շփոթութիւն կը ծագի:)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդարեւ ցաւալի է տեսնել, որ այս օրինակ Խորհրդարանական ամենապարզ սովորութիւն մը մեր պաշտօնակիցներէն ոճանք անդիտանալ ուզեն: Ո՛ւր տեսնուած է որ, երբ Դիւանէ մը կամ Յանձնաժողով մը տեղեկագիր մը գայ, նորա Տեղեկարարն իրաւունք չուենայ խօսելու:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷՏ — Ձեր հիմ գրած սկզբունքն ես անհիմն կը գտնեմ, Ատենապետ էֆէնտի:

Եթէ Երեսփոխանութիւնը Դիւանէ մը եկած գրոյն վրայ իւր զիրողութիւններն ընել յետոյ, դարձեալ այդ Դիւանի կարծեաց դիմելու պարտաւոր պիտի լինի, ապա ուրեմն

ուրիշ բան չլինիր այս, եթէ ոչ Երեսփոխանութեան մէջ ուրիշ Երեսփոխանութիւն մը հաստատել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իմ տուած բացատրութիւնս օխալ ըմբռնած էք Սրբազան Հայր . . . :

(Ընդմիջում փանոսեան էֆ.ի կողմանէ:)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Առ փանոսեան էֆ.) Եթէ այդպէս, առանց օրինաւորապէս խօսք ուզելու, շարունակ ընդ միմեան զմեզ, փանոսեան էֆէնտի, պիտի պարտաւորէք զիս օրինաց գործադրութեանը դիմել:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷՏ — Ինչո՞ւ միւս ընդ միմեաններուն ալ չէք ընել այդ ազգաբարութիւնն, Ատենապետ էֆէնտի: Միթէ՞ արդարութիւն է այս:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Առ Տ. Խորեն Սրբ.) Կը ցաւիմ որ Խորեն Սրբազան չուզէր ըմբռնել թէ իմ ազգաբարութիւնս յոգնակի էր, եւ բոլոր ընդ միմեանք իրենց բաժինն պէտք է փնտռեն նորա մէջ:

(Աղմուկ եւ շփոթութիւնք)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ի ձայն գոնգովի վերամատատելով բարեկարգութիւնն) . Կը տեսնեմ որ թիւրիմացութիւն մը տեղի կուտայ այսքան վերմ վիճարանութեանց: Եթէ ժողովականք չի յուզուին, տարակոյս չուենիմ թէ զիրար դիւրաւ պիտի հասկնամք:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷՏ — Բընաւ թիւրիմացութիւն չկայ: Նոր սկզբունքներ չեմք կրեաք ընդունիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը պարտաւորիմ վերջին անգամի համար յայտարարել թէ՛ Խորեն

Սրբազան իրաւունք չունի ըստ քրիստոնէական սովորոյ մեկնել Վրաստան առաջարկն, որ նոր չէ բռնաւ, եւ օրինաց բողոքովին համաձայն է: Եթէ քիչ մը համաբերութիւն ունենայ, ինքնին պիտի համոզուի թէ միայն ըմբռնած է:

**ՄԵՐԵԵՄ-ԳՈՒՂԻ Յ. ԷՖ.** — (Ի նմն Ելնելով) ժողովոյ կամացը համաձայն, պատասխան եմ խօսք առնուել, ի հարկին իբր Երեսմտիսան իմ կարծիքս յայտնելու եւ ի հարկին, իբր Տեղեկաբեր բացատրութիւններ տալու համար, ինչպէս օրէն է:

Իսկ եթէ ժողովը կուզէ Ատենապետաց Վրաստան եկած զիր մը, առանց Ատենապետաց Վրաստանի կարծիքը լսելու, նկատողութեան առնուել, այն ժամանակ հարկ կը լինի որ առանց Ատենապետաց Վրաստանի մասնակցութեան նիստ կազմուի:

**ՅՈՒՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ.** — Ժողովս պէտք չունի լսելու Ատենապետաց Վրաստանի կարծիքն, վասն զի Սոսարդէն իբր պարտաւորութիւն Ուղերձովն յայտնած է իբր կարծիք: Ստիպոյն եւ այնպէս Ատենապետաց Վրաստանի մէջ միանշարժ, իբր պարզ Երեստիտան, կրնայ կարծիք յայտնել: Իմ այս առաջարկս քուէի զրէ՛ք, Ատենապետ է՛ք:

**ՅԱՅՆԵՐ.** — Փակուեմ, միակու՛մ վիճարանութեան:

**ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Կարծուեցու թէ Ատենապետաց Վրաստան կառաջարկէր Ուղերձի մասին տեղի ունենալիք մէջ մի դիտողութեանց պատասխանել իբր Տեղեկաբերին միջոցաւ, որով մաս մը Երեստիտանը բնաւ պէտք չէն տեսներ այդ տրուելիք բացատրութեանց:

Ստիպոյն, եթէ Վրաստան առաջարկին առանց յուզման եւ հանգստութեամբ ըլլուի, տարակայն չունիմ որ օրինաց ձայնն ամենքս ալ պիտի հաշտեցնէ:

Ուստի կը կրնեմ Վրաստան կառաջարկը որ է ըստ սովորութեան ծրագրին ընթացման պահուն իւրաքանչիւր հատուածի վրայ բոլոր Երեստիտանաց կարծիքներն լսուելէ յետոյ, խօսք առնէ Տեղեկաբերն եւ ամէն դիտողութեանց միանգամայն պատասխանելէ ետեւ, Ժողովոյ քուէին ենթարկուի:

Երեստիտանը մեծամասնութեամբ ձայնակցելով Վրաստանի սոսարդիութեան, ըստ այնմ Ատենապետ է՛քէնտի կը հրահարէ զԱտենապետ է՛քէնտի հատուած առ հատուած ընթեռնուել Ուղերձն:

Ատենապետ է՛քէնտի կրնթեռնուել Ա. հատուածն:

«Ա. Հատ. — Ազգային Ժողովոյ ներկայ նստաշրջանի բացմանն առթիւ Չերթաք Սրբազնութեան Երեստիտանի Երեստիտանի ի պատասխանի, Երեստիտանի ի պատասխանի կը փութայ արտայայտել իբր Երեստիտանի զգացումը հաւատարմութեան»:

**ՅՈՒՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ.** — Խօսք կուզեմ: Ես կը կարեմ թէ երախտագիտութիւն բուն ունեցարձոր է այս տեղ: Տարտապէս չկայ թէ երախտագիտութիւն կարտայայտուի ընդունուած շնորհքի մը համար: Արդ, Ա. Պատրիարք չոր ժողովս բանալ՝ իբր սրտաուարութեան զուրկ, մասնաւոր շնորհք մը չէ: Ուստի լուազայն է ըսել՝ մեր բարձր գոհունակութիւնը կ'արտայայտենք:

**ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՖ.** — Ես ալ գոհունակութիւնս կընդունեմ, բայց ոչ բարձր բառը:

**ՅՈՒՂԵՆՏԵԱՆ Ն. ԷՖ.** — Առաջին հատուածին վրայ՝ Թրեստիտան է՛քի դիտողութիւնն ըստ իրաւացի կը գտնեմ:

ՓԱՆՈՍԵԱՆ Կ. ԷՖ. — Ես ալ նայեալէս :

ՄԵՐԵԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — (Տեղեկաբեր) Եթէ Ատենապետաց Դիւանն « Երախտագիտական զգացում » բառն է, ասիկայ պարզ քաղաքավարական ասուցած մ'է ի պատասխանի Ս. Նախագահի օրհնածիր խօսքերուն : Այսու հանդերձ բնա դժուարութիւն չկայ աւոր տեղ « գոմուցակութիւն » կամ « շնորհակարութիւն » բառերը գործածելու :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷՏ — Բախտաւորութիւն մը օրհնածիր չընտար լինիլ, մանաւանդ երեւոյթական ժողովոյ մը բացման ճառն . այլ օրհնութիւնը կը տրուի յաւարտ ճառին : Ուստի ես կատաճարկեմ վերջընել օրհնածիր բառը և՛ Երախտագիտական զգացում բառին տեղ դնել՝ սրտագին շնորհակարութիւն բառերն :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — (Խօսելով իբրեւ երեւոյթական) Լուսաշող բառն է՝ շնորհակարութիւն բառն, հոս գոմուցակութիւնն նշանակութիւն մը չունի, վասն զի Ս. Նախագահի օրհնութեան փոխարէն՝ պարտ է ժողովոյ շնորհակարութիւն յայտնել և ոչ թէ գոհունակութիւն :

ԶԱՅՆԵՐ — Այո՛, իրապէս է :

ԹԻՒԼՊԵՏՏՃԵԱՆ Ն. ԷՖ. — Բայց շնորհակարութիւն բառն ալ երախտագիտութիւն կը նշանակէ, որ չընտար դրուիլ : Պէտք է ըստի գոմուցակութիւն, վասն զի ժողովոյ գոհ իր Սրբազան Նախագահն :

ՓՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — Ոչ, պէտք է շնորհակարութիւն ըսել :

Ատենապետ էֆէնտի բուլի դնելով եղած շնորհակարական ասուցարկութիւններն, ժողովն ԿՈ-

ՐՈՇԷ պահել օրհնածիր բառն, և ընդունելով Նար Պէյ-Սրբազանի ասուցարկին երկրորդ կէտը, « իր երախտագիտական զգացմանց ջերմ հաւաստիք » խօսքն բարեփոխել ասուցան « իր սրտագին շնորհակարութեան ջերմ հաւաստիքն » :

Այսու Ատենապետ էֆէնտի կընթեանու Ուղերձին երկրորդ հատուածն, զոր ԿԸՆԴՈՒՆԻ Ժողովն միակողմէն տողագրական վրիպակի մը ուղղութեամբ :

Ատենապետ էֆէնտի կընթեանու երրորդ հատուածն :

« Գ. Հատ. — Նմանապէս խորին գոհունակութեամբ իմացաւ Ամեն. Հայոց կաթողիկոսի ընտրութիւնն՝ որոյ սրբեանց յեջ ԼԷՒԷՆ յարգանքով է թրքահայոց մանուկներն էրանաւն, և կարգաւորուեալ պահպանուած է Հայ Առաքին Եկեղեցւոյ հոգեւորականութիւնն : Մաջարոյս է երեւոյթականութիւնն իմ Սղգին միաձայն ընտրեան, Ամենապատիւ Տ. Մելքիսեդեկ Ս. Արքեպիսկոպոս պիտի բաղմի ընդ հուպ ի Մայր Աթոսն Հայաստանայց Ս. Եկեղեցւոյ : »

ԱՏԵՆԱՊԷՏ ԷՖ. — Կրտսելութիւն ընող կայ այն հատուածին վրայ :

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ. — Որովհետեւ բաւական այլ ընդ սլոյց զրոյցներ չընկնան այս խնդրոյն վրայ, կը փոխարկի, որ եթէ կարելի է, յատենի ժողովոյս բիշ մը բացատրութիւն տրուել և ըւսարքանութիւն բէ՛ արդարեւ Թրքահայոց մանուկութեան իրաւունքն յարգուած է՝ իրմին :

ՓԱՆՈՍԵԱՆ Կ. ԷՖ. — Տէր Մկրտան Հօր եղած ընդունելութիւնը ցոյց կուտայ թէ սրբա՛փ յարգուած է մեր իրաւունքն :



**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — (Առ թիրեաբեան ԷՖ.)  
Նախընթաց Ատենադարձեհէն կրնար տեղեկանալ թէ Կաթողիկոսութեան ընտրութեան արդեանց մէջ յարգուած է Թուրքիոյ Հայոց ձայնը :

**ՓԱՆՈՍԵԱՆ Կ. ԷՖ.** — (Պատասխանելով Ատենապետ ԷՖ.ի) Եթէ այդպէս է, ապա ինչո՞ւ համար Երիտեան Սրբազան չեղաւ Ա. ընտրելի, քանի որ Արգային ժողովոյս Ա. ընտրելին էր այն :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Պէտք է յիշէք միանգամայն թէ ժողովս Ա. ընտրելի ներկայացընելով հանդերձ զԵրիտեան Սրբազան, ըսած էր թէ յետ բարդելոյ ի Ա. Էջմիածին կատարուած քուէարկութեան քուէից թիւն մեր ներկայացուցած երեք ընտրելեաց՝ յառաջին ժողովոյս ստացած քուէից թուոյն վրայ, առաւելագոյն թիւ ստացողն է՝ ընտրուել Կաթողիկոսն Ամենայն Հայոց, ըստ նախաանող սովորութեան :

**ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ.** — Հարկ չկայ այդ օրինակ մանրամասնութեանց մէջ մտնելու և պէտք է ուրախ լինել, վասն զի լուր առած եմ այս առաւօտ թէ՛ Ամեն Մէլիխեղեկ Սրբազանի ընտրութիւնը վաւերացուած է :

(Զանազան նստարաններէ շարժմունք)

**ՓԱՆՈՍԵԱՆ Կ. ԷՖ.** — Այդ հատուածին մէջէն պէտք է վերցնել լիովին բոսը :

**ԹՆԿՐԵԱՆ Ա. ԷՖ.** — Ես ալ ճիշդ այդ լիովի բառին վրայ իմ գլխուղարկութիւնքն ընելու համար խօսք կուզեմ :

Հարկ է գիտնալ թէ Կաթողիկոսական ներկայ ընտրութեան մէջ Թրքահայոց մասնակցութեան իրաւունքն յարգուած չէ : Մեր եռանուն ընտրելեաց անուններն իբր պարզ

